320 Միակ Աստվածն է Եհովան, (2)

1. Միակ Աստվածն է Եհովան, (2)
Նա է սերը, Նա է Տերը հավիտյան:
Պիտի երգեմ՝ ալելուիա՛:
Պիտի գոչեմ՝ ալելուիա:
Միակ Աստվածն է Եհովան հավիտյան:

2. Հիսուսն է սուրբ Որդին Աստծո: (2)
Նա է ճամփան, Նա է կյանքը հավիտյան:
Պիտի երգեմ՝ ալելուիա՛,
Պիտի գոչեմ՝ ալելուիա՛,
Հիսուսն է սուրբ Որդին Աստծո հավիտյան:

3. Հաղթական է Աստծո Հոգին, (2)
Նա է միակ սրբությունը հավիտյան:
Պիտի երգեմ՝ ալելուիա՛,
Պիտի գոչեմ՝ ալելուիա՛,
Հաղթական է Աստծո Հոգին հավիտյան:

4. Սուրբ է, սուրբ՝ Երրորդությունը, (2)
Որ էր, որ է, որ կլինի հավիտյան:
Պիտի երգեմ՝ ալելուիա՛,
Պիտի գոչեմ՝ ալելուիա՛,
Սուրբ է, սուրբ է Երրորդությունը հավիտյան: